կրութեանց անցելոց. եհաս ի վերայ և Ռէյէնթ Տօմինիքանաց Լէսպօլսոյ՝ Փաթէր Իուսթուս Ռօլայ, և ծանուցայ ամենեցունց Տօմինիքանաց տեղւոյն, որ և մատուցեալ Փաթէր Փռիսրն ամսթալի, հայցէր զներումն վասն ոչ առ-նելոյն զպատիւ պատկանաւոր։ Բայց խորհեցայ ոչ յամել ի տեղւոջն, զի և ի քաղաքին լսելի եղեւ անունս. զուցէ վտանգն յորմէ խիթայի՝ պաշարիցէր զիս։ Ծանուցի զխորհուրդս Փաթէր Մաթիասին. որ և նա առ փորձեալ զզգացումն իմ, խոստացաւ յերեքշաբաթւոջ աւուր առնուլ զիս ընդ իւր մինչեւ ցՍթանիսլավով։

16. Յերեքշաբաթոջ, զկնի պատարագին, կառաւ Փաթէր Մաթիասին գընացինք դէպ Սթանիսլավով. և յերեկոյին խոտորեցաք ի գեօղն, ուստի ե-բեւիւր գեօղաքաղաքն Հալիչ, և օթեցինք ի բակի շինականի ումեմն մե-ծատան։

17. Ի չորեքշաբաթոջ անցեալք նաւու զգետն Տնեստր, գնացինք ի Հա-լիչ. Փաթէր Մաթիաս գնաց առ գասթէլլանն, և ես ի տուն Ժէլինքայ կնոջ հայկազնւոյ, առ որում երկիցս յայցելութեանն Սթանիսլավու՝ օթեալ էի. բայց ոչ նա զիս ծանեաւ և ոչ ես ետու ծանօթութիւն. գնեցի ի թո-ռանէ նորա զերկուս դոխաս աղաւնոյ՝ վասն վաղուեան, և կերի ընդ սպա-սաւորիս վարունգս թթվոյ ևեթ։ Էր յայնժամ Սէյմիք գաւառին և մեծամեծք ամենեքեան ժողովեցեալք էին, ընդ որս և Վլատիքայ Ռուզաց՝ Շումլայնսքի, զոր տեսի ի գնալն առ ժողովն, այլ ոչ ողջունեցի. սակաւ ինչ յամեալք՝ յետ ուտելոյն, դիմեցինք ի Սթանիսլավով, և երկուք ժամաք յառաջ քան զերեկոյն՝ հասինք յարտաքաղաքն, ի գերդաստանն Թրինիթարաց. Փաթէր Մաթիաս գնաց ի վանք կարգին իւրոյ, և ես մնացի անդէն։ Այստ ի ծա-ծուկ կոչեցի առ իս զՊատուելի Տէր Ստեփաննոս Ստեփանեան՝ զաւագն Հոգաբարձուաց գաւառին. որոյ ի տեսութենէն ուրախ եղէ յոյժ, և բերկրե-ցաւ ոգիս. որ և յօժարամտաբար մխիթարեալ զվշտագնեցեալս, բաց ի պաշտպանելոյ զկերլիս, շնորհեաց և զզգեստս գղերիկոսականս, և զանկո-ղինս վշենակաւ, նա և զթոշակ ճանապարհի։ Ագայ անդէն զայն գիշեր։

18. Ի հինգշաբաթոջ ընդ Տեառն Ստեփաննոսի եղերեցի ոչ մնալ անդ, այլ յառաջել ի Սնեաթին և անդուստ ի Սէչօվ դիմել, և անդէն ձմերել ա-պահով. ծանուցի զխորհուրդս Փաթէր Մաթիասի, և կառաւ նորա (որ գնա-լոց էր ի Պանիլովայ, առ սահմանաւն Մօլտաւիոյ, ուր նախաքաղեցեալք էին գոյք եկեղեցւոյ նորա՝ յահէն Սվէտաց), գնացի դէպ ի Սնաթին։ Անցեալք ուրեմն ընդ աւանն Թիմինից, ուր եկեղեցի և քահանայ Հայոց և Հայք ոչ սակաւք են, ոչ ումեք տուեալ զծանօթութիւն, թէ և յաւանամիջի անդ զո-մանս տեսի, հասինք ի գեօղն Թօլմաչ, երկու մղոնօք հեռի ի Սթանիսլա-վովու, և օթեցինք անդ։

19. Յուրբաթոջ ելեալք անտի, պատահեցան երկու Թրինիթարք ի վա-նաց Փաթէր Մաթիասին, որք զեկուցին նմա զգոյից եկեղեցւոյն։ Ի յաւա-նին Կվօժիեց ճաշեալք, գնաց Փաթէր Մաթիաս ի Պանիլովայ. և ես վար-